ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝ <<ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ>>

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ԽՈՒՄԲ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

2022 թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……1

Վանի թագավորության ծնունդն ու ամրապնդումը ……3

Վանի թագավորության վերածվելը Առաջավոր Ասիայի

հզոր տերության ……5

Արգիշտի Ա։ Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաքների կառուցումը…6

Վանի թագավորությունը վերջին գահակալների օրոք

Թագավորության անկումը……6

Վանի մշակույթը և դիցարանի կառուցվածքը……8

Բովանդակություն……12

Գրականություն ……13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական բարձրավանդակն է Հայոց պատմության գլխավոր թատերավայրը, և դա է պատկերվում ու զգացվում իբրև մեր ամբողջական հայրենիք՝ անկախ ազգագրական պայմաններից և ժամանակների քաղաքական սահմանազծումներից:

Հայկ Ասատրյան

Հայկական բարձրավանդակի և Անդրկովկասի շրջաններում, որտեղ բնական պայմանները չէին նպաստում ոռոգվող գյուղանտեսության համար, կարևոր դեր է խաղացել հանքային հարստության առկայությունը, գլխավորապես պղնձի և երկաթի: Իսկ արոտավայրերի և ալպիական մարգագետինների վրա զարգանում էր անասնապահությունը: Հին Անդրկովկասի պատմության վերաբերյալ աղբյուրներից կարևոր են ուրարտական արձանագրությունները: Բովանդակությամբ նրանք կամ ուրարտական թագավորների գործունեությունը լուսաբանող վավերագրություններ են, կամ կառուցողական արձանագրություն:

Ուրարտուն շրջապատված էր անմատչելի լեռներով, որոնք պաշտպանում էին թագավորությունը բոլոր կողմերից: Ուրարտուն կամ Վանի թագավորությունը, սկզբում շատ փոքր էր ու թույլ և դժվարությամբ էր դիմագրավվում իր հզոր հարևան Ասորեստանի հարվածներին: Որպես պետության 1-ին թագավոր հիշատակվում է Արամեն, սկսած մթա 859թ-ից: Մեզ հայտնի հաջորդ թագավորը Սարդուրի 1-ն է: Նա թողել է Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի՝ Վանի կառուցման մասին արձանագրություն: Ուրարտուի պատմության վերաբերյալ շատ տվյալներ են պարունակում Ասորական և Բաբելոնյան աղբյուրները, որոնք նկարագրում են այդ պետության արտաքին քաղաքականությունը և ռազմական արշավները, մասնավորապես Անդրկովկասի տարածրջանում: Հսկայական նյութ է տալիս հնագիտությունը, հատկապես պեղումները, այնպիսի կարևոր Ուրարտական կենտրոնների, ինչպիսիք են Կարմիր-Բլուրը (Թեյշեբաինի), Արգիշտիխինիլին և Էրեբունին: Վանի թագավորությունը գրավոր աղբյուրներում հայտնի է 4 անուններով: Առաջինը, հենց արձանագրություններում Վանի թագավորությունը հանդես է գալիս, որպես Նաիրի թագավորություն, ընդ որում, եթե Ք.ա. 13-9-րդ դարերում Նաիրի երկրներ, Նաիրի երկրների համադաշնություն է եղել, ապա պարզ է դառնում, որ Վանի թագավորությունը եղել է Նաիրիի իշխանության մի մասը: Սեպագրերում Վանի

թագավորությունը հիշատակվում է Բիայնիլի անվամբ, քանի որ սեպագիրը չունի «վ հնչյունը վ-ն բ-ով էին փոխարինում,Վանա և Բիայնա: Այս իշխանությունը սկսում է միավորել ամբողջ հարավային Հայաստանը և պատահական չէ, որ նրա տիրակալները կրում են՝ ««Նաիրի երկրի թագավոր» տիտղոսը: Ասորաբաբելոնական արձանագրություններում առավել տարածված ձևը «Ուրարտու-ն է, իսկ Աստվածաշնչում՝ Արարատ: Հասկանալի է, որ Ուրարտուն դա Արարատի ասորաբաբելոնյան տարբերակն է, այստեղ գործում է,ու «ա հնչյունափոխությունը: Անգամ գտնվել է դրանց միջանկյալը, որտեղ Հայաստանը հիշատակված է Արարատ-Ուրարատ-Ուրարտու: Ուրարտու տերմինը Հայաստան անվան համարժեքներից մեկն է: Պարսկերեն Հայաստանը կոչվել է Արմինա, որը Արմենիայի համարժեքներից է:

Գիտության մեջ բազմիցս քննարկվել է, թե, որն է Վանի թագավորության սկզբնատարածքը, նախքան Տուշպա-Վան քաղաքի հիմնադրումը: Ելնելով Արարատ և Ուրարտու անունների նույնականությունից, ժամանակին առաջ է քաշվել տեսակետ, որ թագավորության սկզբնատարածքը պետք է լիներ Արարտյան դաշտը: Սակայն այս տեսակետը հետագայում մերժվեց, քանի որ ակնհայտ էր, որ Տուշպա-Վանի տիրակալները արշավում են Վանա լճի ավազանից, իսկ Մենուան, ապա Արգիշտի առաջինը նվաճում են Արարատյան դաշտը, հասկանալիորեն սեփական սկզբնատարածքը նրանք չէին նվաճի: Մյուս տեսակետը, որ առաջ քաշվեց և այսօր առավել տարածված է կապվում է Վանա լճի արևելյան և հարավարևելյան շրջանների հետ, քանի որ այդտեղ էին գտնվում պետության երեք գերագույն աստվածների պաշտանմունքի գլխավոր կենտրոնները (Արդինի-Մուսասիրը, Կումենուն և Տուշպան): Կա ևս մեկ տեսակետ, ըստ որի Ուրարտուի սկզբնատարածքը կարող էր գտնվել Վանա լճի հարավարևմուտքում, հայկական Տավրոսի լեռների շրջանում: Այս տեսակետը համեմատած մյուս տեսակետների հետ տրամաբանական է թվում, հատկապես մշակույթային առումով:

Վանի թագավորության ծնունդն ու ամրապնդումը

Ք.ա. IX դարում Հայկյանների Այրարատյան թագավորության՝ Ասորեստանից կրած պարտությունների հետևանքով Հայկական լեռնաշխարհում ծնունդ է առնում մեկ այլ պետություն։ Վերջինս նրա արքաների թողած սեպագիր արձանագրությունների մեջ կոչվում է Բիայնիլիի թագավորություն, իսկ ասորեստանյան արձանագրություններում՝ Ուրարտու։ Եվ քանի որ Բիայնիլի անունից ծագում է Վան քաղաքի անունը, պատմագիտության մեջ ընդունված է այն կոչել Վանի կամ՝ համաձայն ասորեստանյան անվանման, Ուրարտուի թագավորություն։

Թագավորության հիմնադիր արքա է հիշատակվում Արամեն, որը կառավարել է մ.թ.ա 860-840 թվականներին։ Նրա մասին տեղեկություններ են պահպանվել Ասորեստանի Սալմանասար Գ թագավորի (մ.թ.ա. 859-824) արձանագրություններում։ Արամեին հաջորդել է Լուտիպրին մ.թ.ա. 844-834թթ., այնուհետև Սարդուրի Ա-ն, որը մ.թ.ա. 830-ական հզորացրել է երկիրը և Վանա լճի ափին հիմնել Վան (Տուշպա, Տոսպ) մայրաքաղաքը, որի անունից էլ առաջացել է թագավորության անունը՝ Վանի թագավորություն։ Սարդուրի Ա-ին հաջորդում է Իշպուինին, որը իր որդի Մենուայի հետ իրականացնում է մի շարք բարեփոխումներ և շարունակում հզորացնել երկիրը։ Վանի թագավորությունը իր հզորության գագաթնակետին է հասել Արգիշտի Ա-ի գահակալման ժամանակաշրջանում (մ.թ.ա. 786-764)։ Նա կազմակերպել է մի շարք արշավանքներ դեպի Ասորեստան և այլ երկներ։ Նա շրջափակման մեջ է գցել Ասորեստանը, որի հետևանքով հակառակորդի զորավարները սարսափում էին նրանից և ասում, որ «նրա անունը հնչում է ինչպես ծանր հողմ»։ Արգիշտի Ա-ից հետո գահը անցնում է նրա որդի Սարդուրի Բ-ին, որը նույնպես շարունակում է տարածքային նվաճումները։ Սարդուրի Բ-ից հետո երկրում սկսում է անկման ժամանակաշրջան, որի ժամանակ գահակալում են Ռուսա Ա-ն, Արգիշտի Բ-ն, Ռուսա Բ-ն, Սարդուրի Գ-ն, Սարդուրի Դ-ն, Էրիմենան, Ռուսա Գ-ն և Ռուսա Դ-ն։ Թագավորությունը վերջնական անկում է ապրում մ.թ.ա 590 թվականին։

Սկզբում այն փոքր պետություն էր, որ դժվարությամբ դիմադրում էր ասորեստանյան արշավանքներին։ Սակայն քաղաքական բարենպաստ պայմանների շնորհիվ այն աստիճանաբար տարածվում է և ծավալվում։ Շուրջ մեկ դարի ընթացքում զենքի ուժով Վանի թագավորությունն իր իշխանությունն է հաստատում Հայկական լեռնաշխարհի

մեծ մասի վրա։ Վանի թագավորության հիմնադիրը եղել է Սարդուրի Ա-ն, որն իր մայրաքաղաք Տուշպայի (Վանի) կառուցման մասին թողած արձանագրության մեջ իրեն կոչում է «Մեծ արքա, տիեզերքի արքա, Նաիրի երկրի արքա, արքաների արքա, որը բոլոր թագավորներից հարկեր է ստացել»։

Վանի թագավորության էթնոքաղաքական ծագում

Ասորեստանի Ասարհադդոն VIII թագավորը մ.թ.ա. 680 թվականին փորագրված արձանագրությունների մեջ պատմում է, որ մ.թ.ա. 681 թվականին իր երկու եղբայրները իրենց հոր՝ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի դեմ դավադրություն են կազմակերպում ու սպանում նրան։ Հետո ըստ այդ արձանագրությունների՝ նրանք փախչում են Ուրարտու։ Աստվածաշնչում՝ Թագավորների 4-րդ գրքում, նույնպես գրված է այս դեպքի մասին։ Բայց այստեղ ասված է, որ երկու եղբայրները՝ Ադրամելիքն ու Սարասարը, իրենց հորը սպանելով, փախել են Արարատի երկիր։ Հայտնի է, որ հնագույն ժամանակներից «Արարատի երկիր» կոչվում էր Հայաստանը (Հայքը)։ Այդ մասին գրված է նաև հայկական հնագույն «Հայկ և Բել» վեպում։ Նույն այս դեպքի մասին 5-րդ դարի հայ պատմիչներից գրել է Մովսես Խորենացին։ Նա պատմում է, որ երկու եղբայրները իրենց հորը՝ Սենեքերիմին սպանելուց հետո «փախան եկան մեզ մոտ»։ Պարզ է, որ Խորենացին գրելով «մեզ մոտ»՝ նկատի ուներ իր հայրենիքը՝ Հայաստանը։ Ուրեմն, ըստ Խորենացու, հայրասպան եղբայրները եկել են Հայք։ Վերջապես, նույն դեպքի մասին, փոքր-ինչ փոփոխված, պատմվում է նաև հայոց «Սասնա ծռեր» («Սասունցի Դավիթ») դյուցազնավեպում։ Այստեղ էլ փախստական եղբայրները գալիս են Հայաստանի Սասուն գավառը։

Նշված չորս աղբյուրներից մենք իմանում ենք, որ «Ուրարտու»-ն, «Արարատի երկիր»-ը և «Հայաստան»-ը միևնույն երկրի տարբեր անուններ են։ Ասվածը հիմնավորում է նաև մեկ այլ ուսումնասիրություն։ Մ.թ.ա. 6-րդ դարում Պարսկաստանում հիմնվեց Աքեմենյանների թագավորությունը։ Այդ երկրի թագավորները մի քանի հարյուր տարի արձանագրություններ էին գրում։ Նրանց արձանագրությունները երեք լեզվով են գրված՝ հին պարսկերեն, աքքադերեն (բաբելական տարբերակով), էլամերեն (Էլամը Պարսկաստանի հարավում գտնվող հին երկիր էր)։ Հին պարսիկները Հայքն անվանում էին «Արմինա»։ Պարսից Աքեմենյան թագավորների բազմաթիվ արձանագրություններում Հայաստանը հաճախակի է հիշատակվում «Արմինա» անունով։ Նրանց արձանագրությունների աքքադական մասում «Արմինա»-ի փոխարեն բոլոր տեղերում գրված է «Ուրաշտու»։ Աքքադերենի ասորական տարբերակի «Ուրարտու»-ն բաբելական տարբերակում «Ուրաշտու» ձևն ունի, քանի որ ասուրականի «ր» հնչյունի դիմաց

բաբելականը «շ» ուներ։ Այսպիսով, հին պարսկերենով գրված «Արմինա»-ի դիմաց աքքադերենն ամեն տեղ այն ներկայացնում է «Ուրարտու» («Ուրաշտու»)։

Բեհիսթունի արձանագրության մեջ խոսվում է նաև հայերի մասին։ Հին պարսկերեն նախադասություններում հայը կոչվում է «արմինիյա», իսկ աքքադերեն նույն նախադասությունների մեջ՝ «ուրարտայա» («ուրաշտայա»)։ Արձանագրությունում առկա է հետևյալ նախադասությունը՝ «մի հայ անունը Արաքա», որը հին պարսկերեն մասում ունի հետևյալ տեսքը՝ «Արաքա նամա արմինիյա», իսկ աքքադականում՝ «Արախա շուումշու ուրաշտայա»։ Այստեղից էլ պարզ է դառնում, որ հին պարսիկները հայերին անվանել են արմինիյա, իսկ աքքադացիները՝ ուրարտայա (կամ ուրաշտայա)։ Այսինքն՝ ինչպես մեր օրերում հայերին տարբեր ժողովուրդներ կոչում են արմին, արմեն, արման անվան ձևերից մեկով, վրացիները՝ սոմեխի ձևով, այնպես էլ մ.թ.ա. առաջին հազարամյակում հայերին անվանել են նաև ուրարտայա (ուրարտացի)

Վանի թագավորության վերածվելը Առաջավոր Ասիայի հզոր տերության

Վանի թագավորությունը նշանակալից չափով ամրապնդվեց Սարդուրի Ա–ի որդի Իշպուինիի գահակալության շրջանում։ Նա և նրա որդի Մենուան (Ք.ա. 810-786 թթ.) նշանակալից չափով ընդարձակեցին իրենց թագավորության տարածքը՝ ծավալվելով դեպի Արածանի գետի հովիտը և Ուրմիո լճի ավազանի հարավային շրջանները։ Սակայն Վանի թագավորությունը մեծապես հզորացավ Մենուայի օրոք։ Նրան հաջողվեց իրեն ենթարկել ոչ միայն Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, այլև համառ պայքար սկսել Ասորեստանի դեմ՝ Առաջավոր Ասիայում քաղաքական գերիշխանության հասնելու համար։ Նրա օրոք Մասիս լեռան հյուսիսային փեշերին կառուցվեց Մենուախինիլի քաղաքը։ Նա իր թագավորությանը միացրեց Հայկական լեռնաշխարհի արևմտյան մի շարք շրջաններ, Դիաուեխի երկիրը և այլն։

Մենուայի ժամանակներից սկսած երկրում մեծ զարկ տրվեց ջրանցքաշինությանը ։ Թագավորը Հայոց ձոր (այժմ՝ Խոշաբ) գետից 72 կմ երկարությամբ ջրանցք կառուցեց մինչև պետության մայրաքաղաք Տուշպա։ Ջրանցքն այնքան լավ էր կառուցված, որ գործում է մինչև այսօր՝ ջուր մատակարարելով Վանի բնակիչներին և այգիներին։ Ավելի ուշ հայերը ջրանցքը կոչում էին Շամիրամի ջուր՝ Ասորեստանի թագուհի Շամիրամին վերագրելով դրա կառուցումը։

Արգիշտի Ա: Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաքների կառուցումը

Գահ բարձրացած Արգիշտի Ա-Ն (Ք.ա. 786-764) շարունակեց իր հոր քաղաքականությունը: Մեծ արշավանք ձեռնարկելով տերության եփրատյան սահմանները՝ նա ոչ միայն ամրապնդեց դրանք, այլև ձեռք բերեց հարուստ ավար և մեծ թվով գերիներ:

Ք.ա. 782 թվին նա մեր հանրապետության մայրաքաղաք Երևանի տարածքում կառուցում է Էրեբունի քաղաքը, որի անունից էլ ծագում է Երևանի անվանումը: Իր թողած արձանագրությունների մեջ նա նշում էր, որ Էրեբունին կառուցվել է «ի բարօրություն Բիայնիլի Երկրի, ի տապալումն թշնամական երկրների»: Էրեբունին վերածվեց տերության հյուսիսային կարևոր հենակետի:

Արգիշտի Ա-ն Արամայիսի Արմավիր մայրաքաղաքի հարևանությամբ կառուցում է Արգիշտիխինիլի մեծ քաղաքը, որը վերածվում է տերության հյուսիսային շրջանների կարևոր վարչական կենտրոնի և ռազմական մի նոր հենակետի: Քաղաքն ուներ զուգահեռ ուղիղ փողոցներ: Տները բազմատեսակ էին՝ խղճուկ խրճիթներից մինչև շքեղ առանձնատներ ու պալատներ: Պալատները զարդարում էին բազմագույն որմնանկարներով: Դրանցում պատկերվում էին աստվածներ, սրբազան կենդանիներ և այլն: Սկզբում Ուրարտուի թագավորները իրենց արձանագրությունները գրել են ասորաբաբելոներեն լեզվով, որից հետագայում հրաժարվել են և անցել տեղական խոսակցական լեզվի օգտագործմանը իրենց գրություններում: Գրության ձևը սեպագիրն էր:

Վանի թագավորությունը վերջին գահակալների օրոք: Թագավորության անկումը

Վանի թագավորությունը շարունակեց ռազմական և տնտեսական վերելք ապրել Արգիշտի Ա-ի որդի Սարդուրի Բ–ի օրոք (Ք.ա. 764-735 թթ.): Ինչպես իր նախնիները, Սարդուրի Բ-ն էլ սկզբում ուշադրություն դարձրեց իր տերության հյուսիսային երկրամասերի վերջնական հնազանդեցմանը, ինչպես նաև նոր երկրների նվաճմանը: Արշավանք ձեռնարկվեց անհնազանդ Շիրակի դեմ, Սևանա լճի արևմտյան ափին նվաճվեցին Վելիքուխի (Գեղարքունիք) և նրան հարևան երկրները՝ պետության սահմանը հասցնելով մինչև Արցախ: Սարդուրի Բ-ի պայքարը Ասորեստանի դեմ, որ ռազմավարական լուրջ պլաններ էր շոշափում, դժբախտաբար, ավարտվեց անհաջողությամբ: Ասորեստանյան գահ բարձրացած Թիգլաթ-Պալասար Գ-ն, որ կարողացել էր ամրապնդել Ասորեստանի բանակը, Ք.ա. 743 թ. պարտության մատնեց

Եփրատի հոսանքով հարավ շարժվող Սարդուրիի զորքերին: Ավելին, Ք.ա. 735 թ. ասորեստանյան բանակը, շարժվելով առաջ, մոտեցավ մայրաքաղաք Տուշպային և պաշարեց այն: Ճիշտ է, քաղաքի միջնաբերդը թշնամուն գրավել չհաջողվեց, սակայն Տուշպան ավերվեց, և թշնամին ավարով ու գերիներով հեռացավ:

Սարդուրի Բ-ին հաջորդած Ռուսա Ա-ն (Ք.ա. 735-713 թթ.) հսկայական ջանքեր գործադրեց պետության հզորությունը վերականգնելու համար: Նա մեծ նվաճումներ կատարեց Սևանա լճի ավազանում և նրանից արևելք ու հարավ ընկած տարածքներում: Ամենուրեք կառուցվում էին ամրոցներ : Նա ստիպված էր ծանր կռիվներ մղել Հյուսիսային Կովկասից ներխուժած կիմմերական ցեղերի դեմ, որոնք սկզբում ծանր հարվածներ հասցրին Վանի թագավորությանը: Ի վերջո Ռուսայի դիվանագիտությունը հաղթեց, և վտանգավոր թշնամին նրա հորդորներով շարժվեց դեպի Փոքր Ասիա

Վանի թագավորությունը ծանր հարված ստացավ Ռուսա Ա-ի գահակալության վերջին շրջանում: Ռուսա Ա-Ն սկզբում ամեն կերպ խուսափում էր Ասորեստանի հետ բախումից: Իսկ երբ պարզ դարձավ, որ դա անհնար է, նա սկսեց վարել արտաքին ակտիվ քաղաքականություն: Դրան ի պատասխան, ասորեստանյան բանակը Ք.ա. 714 թ. ներխուժեց թագավորության կենտրոնական երկրամասերը: Թշնամին՝ անխնա ավերելով ու ավարի ենթարկելով երկիրը, անգթորեն ոչնչացնում էր ոչ միայն բնակավայրերը, այլև այգիներն ու ցանքսերը: Վերադարձի ճանապարհին թշնամին հարձակվեց Վանի թագավորությանը ենթակա Մուծածիրի իշխանության վրա, որտեղ գտնվում էր թագավորության գլխավոր աստված Խալդիի հռչակավոր մեհյանը: Մեհյանը, որն իր ոճով հիշեցնում էր Գառնիի տաճարի նախատիպը, ավերվեց և կողոպտվեց:

Վանի թագավորությունը հզորության մի փայլատակում ունեցավ Ռուսա Բ-ի օրոք (Ք.ա. 685-645 թթ.): Ռուսա Բ-ն (Ք.ա. 685-645 թթ.) Վանի թագավորության վերջին հզոր թագավորն էր: Նա հայտնի է իր շինարարական աշխատանքներով Վանում և հատկապես Արարատյան դաշտում: Այստեղ նա կառուցել է Թեյշեբաինի քաղաքը (Կարմիր բլուր՝ Երևանի տարածքում): Շուտով Թեյշեբաինին խոշոր տնտեսական կենտրոն է դառնում Ուրարտուի հյուսիսային շրջաններում: Հաջորդ տասնամյակներում Վանի թագավորության ռազմական գործողությունները դադարում են: Պետության համար մեծ փորձություն էր Անդրկովկաս ներխուժած Սկյութական ցեղերի արշավանքը: Սակայն շուտով նրանց մի մասը բարեկամական հարաբերություններ է հաստատում Վանի թագավորության հետ: Ռուսա 2-րդին հաջորդել են ևս մի քանի թագավորներ, որոնց ժամանակ պետությունը թուլացել էր: Նրանք իշխում էին նախկին Ուրարտուի միայն արևելյան մասում: Տերության արևմտյան մասում արդեն ձևավորվել էր

հայկական մի մեծ միացյալ իշխանություն՝ Հայոց Նահապետ Պարույրի ղեկավարությամբ, որը և թագավոր հռչակվեց։ Վանի թագավորությունը զինվորական բռնի ուժով ստեղծված թագավորություն էր, ուստի և շուտով (Ք.ա. 580-ական թթ.) դադարեց գոյություն ունենալուց։։

Վանի մշակույթը և դիցարանի կառուցվածքը

Պատմական Հայաստանի Վանա բերդի մոտ՝ ժայռերի մեջ առկա է ժայռափոր արձանագրություն, որը առավել հայտնի է Միհերի դուռ անունով։ Դռան վրայի ժայռափոր արձանագրության մեջ պատկերավոր նկարագրված է Վանի թագավորության դիցարանը՝ աստվածներ, աստվածուհիներ, «սրբություններ» և այլն։ Դիցարանի յուրաքանչյուր ներկայացուցիչ ունեցել է իր սրբատեղիները, որտեղ մարդիկ երկրպագել են նրանց։ Այդ վայրերը, բացի պաշտամունքային դեր կատարելուց, եղել են նաև գիտության, մշակույթի խոշոր կենտրոններ[2]։

Խալդին Վանի թագավորության դիցարանի գլխավոր աստվածությունն է։ Նրա անունը Մուսասիրում (Մուծաձիր) հնչել է Ալդի, իսկ ասորեստանյան արձանագրություններից հայտնի է Խալդիա ձևով։ Լինելով բուն Վանի թագավորության երևույթ, նա, ամենայն հավանականությամբ, սկզբում թագավորող տոհմի հովանավորողն է եղել, իսկ հետագայում, պետականության կազմավորմանը զուգահեռ, ստացել է համաբիայնական նշանակություն։Խալդիի պաշտամունքը քաղաքական մեծ նշանակություն ուներ. Վանի թագավորության տիրակալները, հաշվի առնելով թագավորության բնակիչների վրա այդ պաշտամունքի ունեցած ազդեցությունը, իրենց իշխանությունը հայտարարում էին Խալդիից տրված։ «Խալդին ինձ արքայություն տվեց» արտահայտությունը հայտնի է Վանի թագավորության գրեթե բոլոր թագավորությունների արձանագրություններից[19]։ Խալդին ինքն էլ ընկալվում էր որպես արքա և պատկերվում էր գահին նստած։ Վանի թագավորության արքաները մ.թ.ա. 9-րդ դարի վերջից մինչև 8-րդ դարի վերջ ընկած ժամանակահատվածում իրենց իշխանությունն օրինականացնելու նպատակով թագադրվում էին Մուսասիրում, որտեղ գտնվում էր Խալդիի գլխավոր տաճարը։ Ուշագրավ է, որ Ասորեստանի դեմ երկարամյա պայքարի ընթացքում Վանի թագավորության բնակիչների համար ամենածանր կորուստը Մուսասիրի տաճարի կործանումն էր։

Խալդիի անունով են առաջնորդվում Վանի թագավորության արքաները իրենց գործունեության բոլոր ոլորտներում, լինի պատերազմ ու արհավիրք, թե խաղաղ շինարարություն։ Նրանց տարեգրությունները տարի առ տարի, գրեթե առանց

բացառության, սկսվում են հետևյալ բառերով. «Խալդին արշավեց…», և ավարտվում՝ «հանուն Խալդիի այս մեծագործությունները մեկ տարում կատարեցի»։

Բավականին հետաքրքիր է, որ Վանի թագավորության կրոնական քաղաքականության մեջ ձգտում է նկատվում, եթե ոչ առ միապաշտության, ապա շատ կայուն գիծ դիցարանում Խալդիի պաշտամունքի գերակշռությունն ապահովելու ուղղությամբ։ Այս առումով ուշագրավ է, որ Կարմիր բլուրի սեպագիր նամակներում խոսակցին դիմելու ընդունված ձև է «թող իրավամբ սիրելի լինի կյանքը (քո) աստծուն» արտահայտությունը։ Այստեղ աստված ասելով անկասկած հասկացվել է Խալդին։

Խալդին նաև պատերազմի ու հաղթանակի աստվածն էր, քանի որ Վանի թագավորության բնակիչների պատկերացմամբ նա էր առաջնորդում իրենց բանակներն ու պարգևում հաղթանակ։ Նա նաև ընտանիքի, կյանքի, կենսասիրության մի աստվածություն էր, որովհետև ամենից հաճախ նրանից էր խնդրվում «կյանք, ուրախություն, մեծություն»[24]։ Ինչպես ցույց են տվել Ի.Մ. Լոսևայի ուսումնասիրությունները, Խալդին նաև պտղաբերության և բուսականության աստվածն էր։ Նա արհեստների ու երկրագործության հովանավորն էր, որովհետև նրա հրամանով ու նրա անունից էին հիմնվում քաղաքներ, տաճարներ, գրվում արձանագրություններ, փորվում ջրանցքներ, գցվում այգիներ։

Հայաստանում բրոնզեդարյան նյութական և հոգևոր մշակույթի ավանդույթները պահպանվում և իրենց հետագա զարգացումն են ապրում Վանի թագավորության շրջանում։ Թագավորության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում կարևոր դեր էին կատարում ամրոցներն ու տաճարները։ Խոշոր բնակավայրերը հիմնավորապես ամրացվում էին պարիսպներով։ Բնակատեղի կենտրոնում տեղադրված էր միջնաբերդը, որն ապաստան էր ծառայում երկարատև պաշարումների ժամանակ։ Ամրոցատիպ ճարտարապետական հուշարձաններից հատկապես լավ են ուսումնասիրված Էրեբունին և Թեյշեբաինին։ Հարուստ հնագիտական նյութ է հայտնաբերվել նաև պատմական Հայաստանի՝ ներկայումս Թուրքիայի և Իրանի սահմաններում գտնվող տարածքներում։ Բերդաքաղաքների պեղումների ժամանակ բացվել են նաև պաշտամունքային զանազան կառույցներ։

Վանի թագավորության պաշտամունքային կառույցների շարքում բացառիկ տեղ էր զբաղեցնում տերության գլխավոր սրբավայրում՝ Մուսասիրում գտնվող Խալդի աստծո տաճարը։ Եզակի նշանակություն ունեցող այդ կառույցի ճարտարապետական տիպի մասին կարելի է պատկերացում կազմել Սարգոն II-ի (մ.թ.ա. 722-705 թթ.) պալատի բարձրաքանդակի պատկերից՝ ասորեստանցիների կողմից Խալդիի տաճարի գրավման

և կողոպտման տեսարանից։ Մուսասիրի տաճարը լիովին տարբերվել է Հին Արևելքում հայտնի պաշտամունքային կառույցներից և հիշեցնում է Հին Հունական դասական տաճարների նախատիպը։ Տաճարը կառուցվել է բարձր դիրք ունեցող հարթակի վրա և ունեցել է ճակտոնով ավարտվող երկթեք տանիք։ Տաճարի մուտքի երկու կողմերում կանգնեցված են եղել երկու արձաններ, իսկ ճակատը զարդարվել է խոյակներով պսակված վեց սյուներով։ Ասորեստանցի արվեստագետը պատկերել է նաև ուռուցիկ միջնամաս ունեցող կլոր վահաններ, որոնք տեղադրված են սյուների և ճակատային պատի վրա։ Այդ վահանները լավ հայտնի են Վանի թագավորության ժամանակաշրջանի հուշարձանների՝ Ռուսախինիլի (Թոփրաք կալեի), Ալթին թեփեի (Բարձր Հայք), Ադիլջևազի (Արծկեի մոտ) և այլ պեղումներից։ Վահաններով զարդարում էին ճարտարապետական հուշարձանների ներքին հորինվածքը։

Վանի թագավորության ճարտարապետական արվեստի համար բնութագրական է եղել շինությունները ներսից ներկերով ու բազմագույն քարերով զարդարելու արվեստը։ Զարդարվեստի փայլուն նմուշներ են Արին-Բերդի (Էրեբունի), Կարմիր Բլուրի (Թեյշեբաինի) շինություններում հայտնաբերված որմնանկարները։ Դրանք բազմագույն են և վկայում են Վանի թագավորության ճարտարապետության մեջ գույնի առանձնահատուկ դերի մասին։ Էրեբունիի որմնանկարներից մեկում պատկերված է թագավորական որսի տեսարան, որի մասնակիցներից են ինքը՝ արքան, նրա մերձավոր մեծատոհմիկները, այրուձին ու հետևակը։ Սակայն, ընդհանուր առմամբ, քարի վրա կատարված նախշազարդերն աննշան դեր էին կատարում թագավորության ժամանակաշրջանի շինությունների ներքին ու արտաքին հարդարանքում։ Քանդակագործությունը, քարի վրա փորագրությունը ճարտարապետությունը լրացնող ու հարստացնող գործառույթ էին Վանի թագավորության հուշարձաններում։ Փորագրության արվեստը զարգացում ու տարածում չէր ստացել նույնիսկ ժայռերի մեջ փորված անձավային շինություններում։

Վանի թագավորության ժամանակներից պահպանվել են նաև ժայռափոր որմնանկար (Էրեբունի մ.թ.ա. 8-րդ դար) շինություններ ու խորշեր, որոնք տարբեր գործառույթ են ունեցել։ Դրանց մի մասը պաշտամունքային բնույթ է կրել և կոչվել է «Խալդիի դռներ»։ Այդ տիպի հուշարձաններից նշանավոր է Վանի «Միհերի դուռ» անվանումը ստացած ժայռախորշը, որը ունի ավելի քան 5 մետր բարձրություն։ Աստիճանները տանում էին դեպի խորշի մուտքը, իսկ ժայռի ստորոտում գտնվում էր պաշտամունքային ստորգետնյա մեկ այլ շինություն։ «Միհերի դուռ» խորշը հայտնի է կրոնական բնույթի սեպագիր արձանագրությամբ, որը փորագրվել է Իշպուինիի (մ.թ.ա. 825-810 թթ.) և

Մենուայի (մ.թ.ա. 810-786 թթ.) օրոք: Լայն ճանաչում են ստացել նաև Վանի ժայռի մեջ փորված արհեստական անձավները և ընդարձակ շինությունները: Անձավների մի մասը հավանաբար դամբարանի դեր է կատարել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը գալիս ենք այն եզրակացության, որ Վանի թագավորության հիմնադիր արքան եղել է Արամեն (ք.ա . 860-840 թթ), նրա մասին մեզ տեղեկություններ են հասել ասորեստանյան արձանագրություններից: Նրան հաջորդած արքաները՝ շարունակելով նրա գործը, երկիրը կարողանում են հասցնել տարածաշրջանի հզորագույն տերության (Մենուա, Արգիշտի և այլը):

Ցավոք մենք տեսնում ենք, որ Վանի թագավորության վերջին գահակալների ջանքերը երկրի ամրապնդման գործում արդյունք չեն տալիս և տարածաշրջանում իր հզորացման գագաթնակետին գտնվող Ասորեստանյան թագավորության կողմից (ք.ա . 580 թթ) դադարում է գոյություն ունենալ որպես պետություն: Վանի համահայկական թագավորությունը եկավ փաստելու այն հանգամանքը, որ մեր ժողովուրդը իր ուրույն տեղն ունի պատմության թատերաբեմում:Եվ որ մենք հզորանում և հասնում ենք հաջողությունների այն ժամանակ, երբ մենք լինում ենք միական և մեր բոլորի նպատակը լինում է երկրի հզորացումն ու ամրապնդումը : Վանի թագավորության անցած պատմական ուղղու օրինակը արդիական է նաև այժմ:

Դասեր քաղենք մեր պատմությունից և բռնենք հզորացման ուղին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռ. Իշխանյան "Պատկերազարդ Պատմություն Հայոց" 1990 թ.
2. Ա. Մովսիսյան "Հայոց Պատմության Աշխարհակալությունները" Երևան-2008 թ.
3. Մովսես Խորենացի "Հայոց Պատմություն"